

տարօրինակ փայլատակում էին, դա նրանից էր որ իր կեանքի այս նոր ուղղու վրայ, իր կրծքին պինդ սեղմած պահում էր իր սիրելի գիրքը՝ Երբեմն, Երբեմն, աւելի պինդ էր սեղմում գիրքը սրտին, կարծես վախենալով որ մի գուցէ զրկեն նրան իր Հայրենիքից:

Թարգմ. Ասոռ

ՔՆՆԱԴԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՑԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Լեւան Խանանամեան, «Զաքարիա Զագեցու օրենք», պատմական վէպ
(849—889), գինն է 1 ր. 255 երես:

Մեր պատմական վէպերի աղքատիկ շարքի մէջ մտնելու է նաև «Զաքարիա Զագեցու օրենք», որի առաջաբանի մէջ սպրտած երկտողից իմանում ենք, որ այդ վէպը գրուած է հայ գեղջուկի համար, որը ճներողամտութեամբ կը վերաբերուի դէպի մեր (հեղինակի) թերութիւնները։»

Առաջնորդուելով այս տեսակէտից պ. Խանսանամեանը պէտք է ձգտէր՝ իր գրուածքը մատչելի և դիւրըմբոնելի դարձնել գեղջուկ ընթերցողին, այն ինչ 254 երեսների խորդութորդ նախադասութիւնների երկար շարանը, համեմուած կարճ ու զիշտ ածականներով, նորագոյն և նորածին բառերի անտեղի կուտակումով յուսահատութեան չափ ծանրատաղտուկ (հեղինակի սիրած բառն է) կը բերեն նոյն իսկ գրամոլ ընթերցողին; Իսկ մեր գիւղացին պ. Խանսանամեանի վէպից մի բան քաղելու համար, ձեռքին պէտք է ունենայ մի բառարան՝ մատենադարանական բունջ ու պուճախից հանած ու այստեղ-այստեղ իցկած անազնադրողդ բառերը հասկանալու համար։

Իբրև նմուշ, սիրասնունդ, սիրատոնիկ (զաւակս), սեամ, ահազնադղորդ, խուժագուժ (ժամանակներ), ընդոստախօս, ընդունայնապարծ, առաքել (փոխ, ուղարկել), վաղվաղակի, դաւադրուժ (1), վրդովագին, տոռներով, յոլով, յողորդախօս, յա-

մեցնել (կոխ. ուշացնել), ծանրատաղտուկ, արտաքս, սփառուած, խոկալ և այլն։ Դարձուածքներ էլ կան, որոնց իմաստը ըմբռնելու համար պէտք է ոռուսերէն մտածել, օր. «Մենք փորձել ենք մտնել նրա կուրծքը իբրև ծնողի (Ե. երես), և նրա ափերին վխտում էին և ոչխարների հօտերը (,), և եղջուրաւոր կենդանիների նախիրները (,), և արարական նժոյգների ջոկերը, որոնց վրայ զուարճանալու հաճոյքով բռնկուած՝ ցնծում էր Բաղդատ իսլամի զաւակը (Ա. երես), և նրա նուազ կազմուածքը և առօրեայ նիստ ու կացը ջնչում էին աղէխարշ և սոսկալի անդթութիւններով, որոնց նա անխնայ գործ էր զնում իւրաքանչիւր քայլափոխում դժբաղդ Հայաստանի զաւակների վրայ։
Նման դարձուածքներով և անրովանդակ համեմատութիւններով լիքն է ամբողջ գիրքը։

Մեր կարծիքով որևէ գրուածքի արժանիքը ոճի հէնց տեսակէտից՝ հեղինակի իմացած բառերի պաշարը հանդէս ըերելու մէջ չի կայանում, ոչ էլ սեթևեթ, ճոռոմարան, շաղակրատ և պաթեթիկ նախադասութիւններ թխելով գրողը իր տաղանդը երևան կը հանէ։ Ապացոյցի համար վերցնենք Բուղայի և Ատովմի, Բուղայի և Մըբասի, Վասակի և Զագեցու, Վասակի և Մարեմի և միւսների մենախօսութիւնները, թողած այլ մանր կտորներ, որոնք համահաւասար չափով խմորուած են շինծու, ճգնովի դրամատիզմի զառանցանքներով։

Գալով վէպի պատմական լինելուն՝ պէտք է ասել, որ հեղինակը բաւականացել է նրան և նրա հերոսներին պատմական անուններ տալով և պատմական երևոյթների տարեգրական դասաւորումով։ Խակ 849—889 թ. պատմական անցեալը կազուելով վէպի մէջ իր ժամանակի հասարակական, ընկերավարական, սոցիալական և քաղաքական յարաբերութիւնների հետ՝ չի ենթարկուել օրեկտիւ անալիզի՝ լուսաբանելու այդ երևոյթների կապն ու հոգեբանութիւնը։ Միւս կողմից, վերապահելով ժամանակակից գեղջուկի նախահայրերին՝ հայ աշխատաւոր, երկիրը, շէնցնող և բարեկարգող, նրա համար արիւն և քրտինք թափող դասակարգին պասիւ գեր՝ հեղինակը աջողութեամբ յարել է մի առանձին շեշտով նշաւակելու իշխանական և կղերական պաշտամունքի տենդենցիան, և այդ՝ այն գեղջուկի համար, որի կենսահայեցողութիւնը տակաւին դեգերում է ստրկական յատկանիշներով։

Մի նկատողութիւն ևս. պ. Խանսանամեանը փոքր ինչ խախտել է գրականական էտիկան, շտապելով հետաքրքրել ընթերցողին իր նկարով, մինչդեռ նա թէ իր իսկական և թէ

կեղծ «Խանզադէ» (ՀՀՓոթել Տիֆ. Լիստ.-ի աշխատակից Խանզադէի հետ) անուններով տակաւին միաւորներին է յայտնի:
Դրբի գինը եռապատիկ բարձր է արժեքից:

Հ. Ս. Էջտիկեան, «Պատկերազարդ բնաօխարեիկ բառարան», հատոր առաջին, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1903—1905, 6 ր.

Այս հոյակապ աշխատութեան առաջին գըքի մասին ժամանակին խօսել ենք, Բնաշխարհիկ բառարանը պիտի բաղկանայ երեք հատորներից, որոնց իւրաքանչիւր բաժնեգինն է 6 բուրլի: Առաջին հատորի այս մասը պարունակում է անուններ Ա.-ից մինչև Յ. տառով սկսած և բաղկացած 843 երկսիւնակ երեսներից: Դա Հայաստանի աշխարհագրական անունների մի էնցիկլորեպիտ է, որի մէջ ամփոփուած են մինչև այժմ յայտնի բուրլը տեղեկութիւնները: Հ. Ս. էֆրիկեանի այս ծանր աշխատութիւնը պէտք է համարել Վենետիկեան Մխիթարեանների տուած ամենաօգտակար և ամենակարևոր հրատարակութիւններից մէկը:

Гр. Чалхушьянъ, „Армянскій вопросъ и армянскіе погромы въ Россіи“, (Панисламизмъ), Посвящается незабвенной памяти Г. А. Джаншиева, цѣна 20 коп.

Շատ ժամանակին է լոյս տեսնում յիշեալ գիրքը որ տալիս է լիակատար գաղափար հայկական հարցի մասին Ռուսաստանում և աշխատում է բացատրել ջարդերի պատճառները: Հայերիս մասին ամեն տեսակ զրպարտութիւններ տարածողները այնքան շատ են եղել, որ ոռւս հասարակութեան մէջ ստեղծուել են ամենավայրենի կարծիքներ մեր մասին. Ջրել այդ բոլոր ստերն ու զրպարտութիւնները և տալ հայերի մասին ճիշտ գաղափար փորձեց երջանկայիշատակ Զանշեանը: Նրա մահից յետոյ չպէտք էր սկսած գործը թաղել, և ահա պ. Գր. Զալյուշեանը իր այս բրոշիւրով շարունակում է տաղանդաւոր հրապարակախօսի գործը: Ցանկալի է որ այս գրքոյկը տարածուի ոռւս հասարակութեան բոլոր խաւերում:

Ա. Օսիպով՝ «Մի ամիս և. Պօլսում, թարգմ. Ե. Ք. Նալբանդեանի, 1905, Ալէքսանդրապոլ 20 կ.:

Պ. Ա. Օսիպով մի ոռւս թերթի թղթակից, 1896-ի հայ-